ՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՐՀԵՍՏՆԵՐԸ (ԺԹ.-Ի. ԴԱՐԱՍԿԻՁԲ)

ՆԱԶԱՆԻ ԳԱՍՊԱՐԵԱՆ
gasparyannazani@gmail.com)

ՄՈՒՏՔ

Վանը աշխարհի հնագոյն քաղաքներից մէկն է եւ գոյութիւն ունի մինչեւ օրս: Քաղաքը գտնւում է Վանայ լճի արեւելեան ափին՝ լճափից շուրջ 6 կլմ. հեռաւորութեան վրայ: Պատմական անցեալում Վանը մտել է Վասպուրական նահանգի Տոսպ գաւառի մէջ:

Վանը Արեւմտեան Հայաստանի ամենահայաշատ եւ զարգացած քաղաքներից մէկն էր: Այն հանդիսացել է արհեստագործութեան եւ առեւտրի կենտրոն, ունեցել է հարուստ կենցաղ եւ մշակոյթ, յայտնի է եղել իր բազմաթիւ եկեղեցիներով եւ կրթական կենտրոններով: Վանը եւ նրա շրջակայքը հարուստ են պատմական ամենատարբեր ժամանակներին վերաբերող յուշարձաններով ու սեպագիր արձանագրութիւններով:

Սոյն յօդուածով նպատակ ունենք ներկայացնել Վան քաղաքի արհեստները: Տեղեկութիւնները հնարաւորութիւն կը տան աւելի լաւ պատկերացում կազմել տուեալ տարածաշրջանի արհեստագործութեան մասին, բացայայտել, որ Վանի արհեստները հայ ժողովրդի մշակութային ժառանգութեան կարեւոր մասն են կազմում: Անդրադարձ է կատարուել նաեւ արհեստների տարբեր ճիւղերին, փորձ է արուել ներկայացնել նրանց բնորոշ յատկանիշերը, կիրառութիւնը եւ զարգացման աստիճանը:



Վան քաղաքի յատակագիծը

Վանում արհեստագործութիւնը կարեւոր տեղ էր զբաղեցնում: Քաղաքը 1850ականներին ունեցել է «կաշիի եւ չիթի երեւելի գործարաններ եւ մեծ

հոյակապ բաղնիս մը...»[1]: 1870ին Թոխմախեան եղբայրները հիմնել են կտաւագործութեան արհեստանոց[2]: 1880ականներին հիմնուել են Գափամաճեանների, Չթչոց եւ այլ գործարանները, միքանի կաշեգործական ձեռնարկութիւններ (նշանաւոր էր Պարթեւեանինը): 1890ականներին վարպետ Ալեքսանդրը հիմնել է գործարան, որն արտադրում էր ջրհան մեքենաներ, գիւղատնտեսական գործիքներ եւ երկաթեայ այլ իրեր[3]: Նկատի ունենալով քաղաքի բնակչութեան արհեստավարժութիւնը՝ դեռեւս 1895ին ամերիկեան միսիոնարները եւս բացել են արհեստանոցներ, որտեղ՝ «*բամբակէ թել մանելու համար կը գործեն 1000 ճախարակ, կտաւ եւ շալ գործելու համար կը բանին 200 հոր, հագուստ կարելու համար կ'աշխատին 100 ընտանիք, 15 վարպետ հագուստ կը ձեւեն, 20 ընտանիք գուլպայ կը հիւսեն, 60 անձ բամբակ ու բուրդ կը գզեն, 70 անձ մասրա կը լեցնեն, 10 կին վերմակ կը կարեն, բացի ասպի 40 աշխատաւոր կայ հացի փուռերուն մէջ*»[4]:

Արհեստների զարգացումը Վանում պայմանաւորուած էր նաեւ դպրոցներում եւ ուսումնարաններում դրանց դասաւանդմամբ: 1884ից Վանի Կեդրոնական վարժարանում ուսուցանուել է հիւսնութիւն, ատաղձագործութիւն կամ կահոյքագործութիւն: Երամեան վարժարանի աշակերտները սովորում էին կահագործութիւն, կօշկակարութիւն, դերձակութիւն: Որբանոցի սաների համար Այգեստանի ծայրամասում բացուած արհեստանոցներում տղաներին սովորեցնում էին «*...մանուսայագործութիւնն իր յարակից ճիւղերով*», իսկ աղջիկներին՝ գորգագործութիւն[5]: Աղջիկներին սովորեցնում էին նաեւ ասեղնագործութիւն, ժանեկագործութիւն, շիտղագործութիւն:

Վանում գործում էին տասնեակ արհեստներ: Կարեւոր տեղ էին զբաղեցնում հետեւեալները.- ոսկերչութիւն, փորագրութիւն, կահագործութիւն, դերձակութիւն, կաշեգործութիւն, ժամագործութիւն, որմնադրութիւն, կտաւագործութիւն, երկաթագործութիւն, փականագործութիւն, պղնձագործութիւն: «*Վանայ մէջ արհեստներն ալ բաւական ծաղկած են, որոցմէ չորս ամենաբանուկ եւ գլխաւորներն են՝ ոսկերչութիւն, կահագործութիւն, որ մինչեւ Պոլիս եւ Եւրոպա կրնայ հասցնել իր շինուածներ, դերձակութիւն (մոտայի հետ միշտ փոփոխման ենթակայ) եւ կօշկակարութիւն. կան նաեւ դարբնութիւն, երկաթագործութիւն, պղնձագործութիւն, հիւսնութիւն, ոստայնանկութիւն, որմնադրութիւն. նաեւ կան ժողովուրդի պիտոյք լրացնող շատ*

---

[1] «Տեսարանք հայրենի աշխարհաց, Վան կամ Շամիրամակերտ», *Արծուի Վասպուրականի*, 8:1858, էջ 214:

[2] Ա. Թոխմախեան, *Հայրենիքի պահանջները եւ հայ գիւղացին*, Թիֆլիս, տպ. Կովկաս. փոխ. գլխ. կառավ., 1881, էջ 24:

[3] Թ. Յակոբեան, *Պատմական Հայաստանի քաղաքները*, Երեւան, «Հայաստան», 1987, էջ 237:

[4] Կ. Բազէեան, «Արհեստներն ու տնայնագործութիւնը Վան-Վասպուրականում», *Հանդէս ամսօրեայ*, 1-12:2020, էջ 408-9:

[5] Նոյն:

երկրորդական արհեստներ... փորագրութիւն, ներկարարութիւն, խաղաֆորդութիւն, թիթեղագործութիւն, թամբագործութիւն, մուճակագործութիւն եւն.: ... Վանեցի կիները կը պարապին ասեղնագործութեան, կարի եւ զանազան ձեռագործներու, որոնք հազիւ տնական պէտքեր կրնան հոգալ»[6]:

Քաղաքի բոլոր արհեստաւորները հայեր էին, այնտեղ կար «*ոսկերիչ, երկաթագործ, խաղախորդ, կօշկակար, դերձակ, հիւսն, կտաւագործ եւ այլն*»[7]: 1909ին Վանում կար 60 ոսկերիչ, 80 ատաղձագործ, 75 դերձակ, 100 կօշկակար, 200 երկաթագործ դարբին եւն.[8]:

Ներկայացնենք Վանի արհեստներից միքանիսը:

ՈՍԿԵՐՉՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐԾԱԹԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

Վանի արհեստների մէջ առաջնային տեղ ունէին արծաթագործութիւնն ու ոսկերչութիւնը: Ոսկերչութիւնը Վանի հին արհեստներից էր: Հնագիտական հետազօտութիւնները Վանում, մասնաւորապէս Թոփրախ-կալէում կատարուած պեղումների հետեւանքով, յայտնաբերել են ոսկէ, արծաթէ եւ բրոնզէ զարդեր, որոնք որոշապէս հաստատում են, որ ոսկերչութիւնը համարուել է Վանի բնիկների հիմնական եւ ամենակարեւոր արհեստներից մէկը[9]: Բազմաթիւ առարկաների մէջ յայտնաբերուել է նաեւ արծաթէ մի տուփ՝ ծծմբարծաթի փոշու (սեւադ) մնացորդով, որը հաստատում է սեւադի աշխատանքային մեթոդի հնագոյն լինելը: 1870-80ականներին Վանի ոսկերչական արհեստանոցներն ըստ իրենց մասնագիտութեան, բաժանւում էին հիմնականում հետեւեալ ճիւղերի.-

1. Հատիկաւոր եւ արծաթէ թելի գործ (*չիֆթ իշի*, զուգաթել), որը Վանում անուանում էին գաւարսալի[10] գործ.
2. Դրուագում (չեկանկա). Վանում այն կոչւում էր չուքուրթմա.
3. Փորագրութիւն.
4. Տաւելի (քաշուածք).
5. Թաղթա իշի (թերթաւոր).
6. Ոսկեջուր[11]:

Ծծմբարծաթի գործածումով պատրաստում էին ծխախոտի տուփեր, բաժակալներ, սափորներ, ափսէներ, գօտիներ, ապարանջաններ եւն.: Այդ

---

[6] Վանիկ, «Վան քաղաք, տեղագրական ու տնտեսական վիճակագրութիւն», *Բիւրակն*, 38-39:1899, էջ 610:

[7] «Տեսարանք հայրենի աշխարհաց, Վան կամ Շամիրամակերտ», էջ 182:

[8] Ա-Դօ, *Վանի, Բիթլիսի եւ Էրզրումի վիլայէթները*, Երեւան, «Կուլտուրա», 1912, էջ 18:

[9] Վ. Աբրահամեան, *Արհեստները Հայաստանում IV-XVIII դդ.*, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., Երեւան, 1956, էջ 129:

[10] ***Ծխ.***- Ներկայիս, լիբանահայ ոսկերիչներ *կիւվերսէ* բառով կը հասկնան գնդասեղի գլխիկի մեծութեամբ գնդիկ:

[11] Նոյն:

աշխատանքը բաւական բարդ էր եւ սերտօրէն կապուած փորագրութեան հետ: ԺԹ. Ա. դարակէսին Վանում ուժեղանում է թերթաւոր գործը. սրա եւ ծծմբարծաթի գործադրումով պատրաստում էին թէ՛ զարդարանքներ եւ թէ՛ այլ իրեր:

Ոսկերիչ վարպետները իրենց արուեստում կիրառել են ո՛չ միայն բուսական, երկրաչափական զարդեր, այլեւ աշխատել են փորագրել պատմութեան հետ կապուած կարեւոր անձնաւորութիւնների դիմանկարներն ու պատմական յուշարձանները: Վանի ոսկերիչների ձեռքով են պատրաստուել հարսանեաց արկղներ, կանացի պայուսակներ, ծխախոտի տուփեր, գրիչներ, թանաքի ամաններ եւ բաժակներ: Զարդերի համար պոչաւոր ոսկի դրամներ էին արտադրում, որով արտադրող ընտանիքը ստացել էր Պոչովեաններ ազգանունը[12]:

Վանի ոսկերիչները ոչ միայն սեւադով պատրաստած զարդերով բաւարարել են տեղացիների պահանջները, այլեւ մեծ քանակութեամբ արտահանել են այն Պոլիս ու Օսմանեան կայսրութեան այլ քաղաքներ: Սկզբում Պոլսում սեւադը համարւում էր Վիեննայի գործ, սակայն շուտով վանեցի վարպետների պատրաստած իրերի շնորհիւ՝ այդ հռչակը վերագրուել է Վանին. «*շատ չանցած սիւատի (սաւաթ) գործածութիւնը սկսաւ ընդհանրանալ՝ մեծ իրարանցում ձգելով հետզհետէ աճող ոսկերիչ դասակարգին մէջ, աչքառու զարկ մը տալով արհեստի զարգացման եւ գործերու առատութեան*»[13]:

Վանի վարպետները ԺԹ. դարի վերջերին եւ մինչեւ Ի. դարի սկզբի գաղթը իրենց արհեստանոցներում աշխատեցնում էին 18-20 աշկերտներ. ամբողջ աշխատանքը կատարւում էր ձեռքով, մեքենայացում չկար[14]:

1860-70ականներին, ոսկերչութեան հետ միասին ծաղկել էր նաեւ փորագրութիւնը: Վերջինս գլխաւորապէս կատարւում էր արծաթի ու ոսկու վրայ: Սեւադով զարդանախշում էին յատկապէս արծաթէ իրերը. տուփեր, ժամացոյցի շղթաներ, ապարանջաններ, գինդեր, մատանիներ, գրիչներ, թանաքամաններ, մտրակի կոթեր, օղու բաժակներ: Բոլորը պատրաստւում էին արեւելեան ոճով:

Արծաթեայ նրբագեղ աշխատանքների մէջ աչքի էին ընկնում նշանի մատանու սեւադապատ տուփերը, որոնք գործածական էին միայն Վանում: Համաձայն հինաւուրց աւանդոյթի, նշանդրէքի մատանին դնում էին արծաթէ տուփի մէջ եւ փաթաթում մետաքսէ թաշկինակով: Ընտանիքի քահանան, դա փեսայի ձեռքից վերցնելով, տանում էր տուեալ շրջանի հոգեւորականների առաջնորդ եպիսկոպոսին: Վերջինս, մատանին օրհնելով, այն

---

[12] Յ. Պօղոսեան, *Վասպուրականի պատմութիւնից (1850-1900)*, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1988, էջ 31:

[13] ՀԱԱ, ֆ. 227, ց. 1, գ. 346, թ. 4:

[14] Աբրահամեան, էջ 132:

տալիս էր ապագայ հարսի ընտանեկան քահանային, որն էլ տուփը տանում ու յանձնում էր աղջկայ ընտանիքին[15]:

Վանում բաւական տարածուած է եղել հատիկաւոր հմտութիւնը: Հատիկներով զարդարում էին եկեղեցական սպասները, կանանց գօտիները, ճարմանդները, ապարանջանները, վզնոցները, ճակատազարդերը, բաժակները եւ զանազան տեսակի հարսանեաց տուփերը: Վանում հատիկաւոր գործի վրայ աշխատող ոսկերիչ վարպետները կենտրոնացած էին քաղաքի Ս. Նշան եկեղեցու մօտ[16]:

Հատիկաւոր հմտութեան հետ սերտօրէն կապուած էր նաեւ ոսկէ եւ արծաթէ թելերից հիւսուածք պատրաստելու հմտութիւնը՝ զուգաթելը: Այս արուեստի լաւագոյն վարպետները նոյնպէս աշխատել են Վանում, նրանց ձեռքով պատրաստած արդուզարդերը արտահանւում էին երկրից դուրս:

Քաշուածքի գործի (տաւելիի) մասնագէտ վարպետները պատրաստում էին ե՛ւ եկեղեցական ե՛ւ աշխարհիկ իրեր. աշխատանքը կատարւում էր ձեռքով: Նրանց գործիքները նման էին պղնձագործների գործիքներին, ունէին մեծ, փոքր եւ տարբեր ձեւի սալեր, մուրճեր՝ իրին ելեւէջային ձեւեր տալու համար: Այս ձեւով պատրաստում էին խաչերի պատուանդաններ, բաժակներ, սրուակներ եւն.: Քաշուածքի գործը աւելի լաւ էր ստացւում, երբ զարդարւում էր դրուագման ու արծնապատման միջոցով:

Ոսկեզօծելու ձեւը Վանի ոսկերիչներին հասել էր շատ հնից, այն անուանում էին պուտուկի ջուր, կատարում էին շատ պարզ ձեւով[17]:

Բացի ոսկեջրելուց, կային արհեստաւորներ, որոնք գունաւոր ֆոնի վրայ (փայտ, պղինձ, արծաթ) կատարում էին ոսկէ նախշեր, մեծ մասամբ բուսական քանդակներ: Իրը պատրաստելուց յետոյ առանձին ամանի մէջ վերցնում էին վեց մաս ոսկի եւ մէկ մաս սնդիկ, խառնելով հալեցնում եւ ստանում էին յատուկ հեղուկ: Ոսկեզօծուելիք առարկան - լինէր զարդ, անօթ, կամ զէնք - ամբողջութեամբ ծածկւում էր մոմով: Այն մասը, որ ցանկանում էին ոսկեզօծել, փորագրում էին մոմի վրայ իրենց ցանկացած նախշը եւ այդ մասն ամբողջովին ազատում մոմից, ապա հալուած ոսկեջուրը լցնում այդ քանդակած մասը, որոշ ժամանակ յետոյ, երբ սնդիկը գոլորշիանում էր, իրը անջատում էին մոմից, եւ ստացւում էր ոսկէ նախշ կամ գիր:

Վանում ոսկերչութեամբ զբաղւում էին թէ՛ հոգեւորականները եւ թէ՛ աշխարհիկ վարպետները, կային նաեւ գիւղից գիւղ թափառող շրջիկ վարպետներ: *Մշակ* թերթից տեղեկանում ենք, որ Վանում հանդէս է եկել վար-

---

[15] Բազէեան, «Արհեստներն ու տնայնագործութիւնը», էջ 398:

[16] Աբրահամեան, էջ 132:

[17] Նոյն, էջ 133: Իրը ոսկեզօծելու համար պղնձէ ամանը լցնում էին տաք ջրով, մէջը տեղաւորում էին հողէ ամանով ոսկեջուրը, այդ ոսկեջրի լուծոյթի մէջ կախում էին կիսաշրջանաձեւ ցինկից թերթիկ, որի ծայրին հագցւում էր պղնձից մի թել, սրանով ոսկեջրի լուծոյթի մէջ կախւում էր ոսկեջրուելիք իրը. այս մեթոտով ոսկեզօծելու գործը Վանում շարունակւում է մինչեւ Ի. դարասկիզբ:

պետների մի խումբ, որոնց կոչում էին «ինքնակոչ վարպետներ»[18]: Այս նոր վարպետները չունէին այն հմտութիւնները, որոնցով օժտուած էին հմուտները, եւ նրանք իրենց ապրանքը վաճառում էին աւելի էժան գնով, որը մեծ վնաս էր հասցնում հմուտ վարպետներին: Այս «ինքնակոչ վարպետները» դիմում էին տարբեր անարդար միջոցների՝ վարկաբեկելով արհեստաւորի վարքն ու համբաւը եւ պատճառ դառնում յաճախորդների անվստահութեանը՝ առհասարակ բոլոր ոսկերիչների ուղղամտութեան նկատմամբ:

Ապրանքի գինը չափազանց նուազելու պատճառներից մէկն էլ «կաֆաֆ» կոչուող միքանի ոսկերիչներն էին, որոնք, արհեստաւոր չլինելով, վարպետներից ու աշկերտներից ապրանքը գնում եւ վաճառում էին: Շատ արհեստաւորներ, իրենց նիւթական ծանր վիճակից ստիպուած, գրեթէ արծաթի գնով էին վաճառում կաֆաֆներին. «*որոնք չեն խղճար 5 ղրշ. 'մալ եղած' ապրանքը 4 ղրշ.ի առնել*»[19]: Այս պարագայում յաճախորդները սակարկութեան էին մտնում ոսկերիչների հետ, որպէսզի պակաս վճարեն առաջարկուող գնից, եւ միշտ առեւտուրը աւարտւում էր յօգուտ յաճախորդի: Արհեստաւորները տեսնելով, որ իրենց խնամքով պատրաստուած գեղեցիկ ու մաքուր ապրանքները չէին գնահատւում յաճախորդների կողմից՝ սկսում են շատ ջանք չթափել ապրանքի պատրաստման համար:

Այս ամէնի պատճառը համքարութեան մէջ գոյութիւն ունեցող կարգ ու կանոնի վերացումն էր. «*առաջներ ասնաֆական կանոններ գոյութիւն ունեցած ատեններ, իր վարպետին միջամտութեամբ աշակերտին կարողութիւնը մինչեւ որ չվաւերացուէր ասնաֆպաշիէն (գլխաւորէն), ան կարող չէր իբրեւ նոր վարպետ խանութ բանալ եւ աշխատիլ, որով թէ հրապարակը մարմնով եւ կարողութեամբ տղաներու չէր մնար ու արհեստն ալ չէր կեղեքուեր*»[20]:

Արեւելք թերթի 1902 Օգոստոսի համարում կարդում ենք, որ Ս. Սահակ Մեսրոպի տօնին մի նշանակալից արարողութիւն է տեղի ունեցել Վանի Ս. Գրիգոր վանքում: Ոսկերիչ եւ փորագրիչ արհեստաւորների մի խումբ այդ վանքը գնալով ոսկերչութեան եւ փորագրութեան վարպետ է հռչակել 70 աշակերտների. «*նուագէ ու երգերէ վերջ, էսնաֆէն մէկը կարդացեր է «Կտակագիր» մը կամ «Օրհնութեան գիր» մը, շարադրուած 250 տարի առաջ ապրող արհեստաւորներու կողմէ: Կտակագիրը կը սկսի եղեր օրհնութիւններով: Յետոյ մաղթանքներ կ'ընէ եղեր «Հին Կտակարանի Աստուծոյ սիրելի Հայրապետերուն, մարգարէներուն», ինչպէս նաեւ Նոր Կտակարանի նուիրական անձնաւորութեանց՝ որպէսզի իրենց հովանաւորութիւնը չպակսեցնեն նոր վարպետ դարձած արհեստաւորներու վրայէն: Այդ մաղթանքներէն վերջ ալ կարգ մը խրատականներ՝ ուղղուած նոր վարպետնե-*

[18] ՀԱԱ, ֆ. 227, ց. 1, գ. 346, թ. 5:
[19] Նոյն, թ. 7:
[20] Նոյն, թ. 6:

ռու՝ որպէսզի «ուղղութեամբ վարուին, արհեստը զարգացնեն ու ծաղկեցնեն, եւ իրենց ձեռքերով (ձիրքերով անշուշտ) ու վարքովը պատիւ բերեն հին վարպետներուն եւ ոսկերչութեան արհեստին բիր համարուող Բեսելիէլ ճարտարապետին շնորհներով օժտուին»: Այս կտակագրին ընթերցումէն վերջ, ներկայ վարպետները ծափահարութիւններով փառաւորեր են ճարտարապետ Բեսելիէլի անունը, յետոյ արհեստաւորներէն մէկը պարագայի յարմար բանախօսութիւն մը արտասաներ է, եւ ամէնէն վերջն ալ տեղի ունեցեր է վկայականներու բաշխումը»[21]:

Ի. դարասկզբին մեծ համբաւ ունէին վանեցի ոսկերիչներ Յովհաննէս Պոռոզանճեանը, Գէորգ Գոյումճուպաշեանը, Տիգրան Աւագեանը, Մարգար Ղալամքարեանը[22]:

Հրաշալի էր Պոռոզանճեանի «Գարուն, Աշուն, Ամառ եւ Ձմեռ» խորագրուած քանդակը: Գոյումճուպաշեանը նշանաւոր էր իր արծաթեայ «Երկրագունդ» աշխատանքով. «*հայ արուեստի հանճարեղ ստեղծագործականութեան ապացոյց մըն էր այս գործը*»: Այն ցուցադրուած է Թիֆլիսում, Երեւանում եւ Ռուսաստանի զանազան քաղաքներում[23]: Աւագեանը պատրաստում էր ափսէներ, նամակի պահարաններ, բաժակակալներ, ջրամաններ, անուշեղէնի ամաններ եւն.: Ղալամքարեանը նշանաւոր էր իր ինքնաեռներով ու այլ գեղեցիկ աշխատանքներով: Այս անհատները պատկանում էին արհեստաւորների այն բացառիկ տեսակին, որ չէին բաւարարւում միայն հմտութեամբ, այլ փորձում էին արհեստը զարդարել իրենց նորարարութեամբ եւ հանճարի ուժով:

Ոսկերիչ Յակոբ Տէր Արիստակէսեանից իմանում ենք, որ 1910ին թուրքական կառավարութիւնը կազմակերպել է Վանի արհեստաւորների ստեղծագործութեան ցուցահանդէս, որի ժամանակ շքանշանով պարգեւատրուել են Գոյումճուպաշեանն ու Սահակ Տէր Արիստակէսեանը[24]:

1915ին՝ Վանի հայութեան տեղահանման օրերին, Եղբայրական օգնութիւն կազմակերպութեան աջակցութեամբ, 30 վանեցի արհեստաւորներ տեղափոխւում են Երեւան, իսկ ուրիշները՝ Թիֆլիս, ապա, կազմակերպութեան շնորհիւ, բացում արհեստանոցներ: Մի խումբ վանեցի արծաթագործ-ոսկերիչներ հաստատւում են Թաւրիզում եւ այնտեղ հիմնում Վան եւ Իրան արհեստանոցները: Նրանք հիմնականում արտադրում էին արծաթէ իրեր եւ շարունակում գործածել իրենց նախկին «Վան» կնիքները:

---

[21] Ա. Անտոնեան, «Հանդէսի մը առթիւ», *Արեւելք*, Կ. Պոլիս, 1902, թիւ 5024, էջ 1:

[22] Յովսէփ Թօքաթ, *Հայ արծաթագործ վարպետներ*, Վան հրատ., Լոս Անճելըս, 2005, էջ 106-108:

[23] Նոյն:

[24] Նոյն, էջ 108:

ԵՐԿԱԹԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ ԵՒ ՊՂՆՁԱԳՈՐՁՈՒԹԻՒՆ

Երկաթագործական արհեստները Վասպուրականում զարգացած էին հնագոյն ժամանակներից: Թէ՛ գիւղում եւ թէ՛ քաղաքում կենսական նշանակութիւն ունէր դարբնութիւնը, ուստի պատահական չէ, որ դրա տակ լայն իմաստով հասկացւում էր մետաղագործական արհեստների զգալի մասը, իսկ վարպետը կոչւում էր «դարբին երկաթոյ եւ պղնձոյ»: Ըստ Բաբկէն Առաքելեանի՝ զարգացած միջնադարում արտադրական յարաբերութիւնների, արտադրողական ուժերի զարգացման, քաղաքների դերի բարձրացման եւ պահանջարկի մեծացման հետ «*մայր արհեստները, այդ թւում նաեւ դարբնութիւնը, տրոհւում են եւ մի շարք երկաթագործական արհեստներ դառնում են ինքնուրոյն*»[25]: Դարբնութիւնն անջատուելով իր մէջ ընդգրկեց միայն երկաթի (աւելի ճիշտ՝ սեւ մետաղների) մշակման բնագաւառը՝ դառնալով ընդհանուր եւ բազմաբնոյթ արհեստ, որի ներսում աշխատանքի յետագայ բաժանումն անխուսափելի էր: Այս գործընթացն առաւել ցայտուն արտայայտուեց զարգացած արհեստագործական աւանդոյթներ ունեցող քաղաքներում՝ մասնաւորապէս Վանում:

Միջնադարից եկող երկաթագործական արհեստներն են փականագործութիւնը (չլընգիր), որի անջատումը ու զարգացումը կապուած էր քաղաքային կեանքի զարգացման, դրամաշրջանառութեան ընդլայնման, գանձ եւ մեծագին ապրանքներ պահելու անհրաժեշտութեան հետ, ինչպէս նաեւ պայտարութիւնը (նալբանդ)՝ պայմանաւորուած բարձկան եւ քաշող անասուններին պայտելու անհրաժեշտութեամբ: Փականագործութեան զարգացման մասին վկայում է Երուանդ Լալայեանը. «*շինում են երկաթէ չըխկ, փականք, որի մի ծայրն ամրացրած է դրանդիի վրայ, եւ կախ է ընկած, երբ ուզում են փակել՝ միւս ծայրը, որ կարթաձեւ է կամ ծակ ունի եւ վերան մի կարթ, ձգում են միւս կողմի դրանդիի օղակի մէջ*»[26]:

Երկաթագործութիւնից անջատուած արհեստների խումբ է կազմում զինագործութիւնը, որն աւելի վաղ անջատուեց դարբնութիւնից, քան միւսները, ժամանակի ընթացքում ձեռք բերեց առանձնայատուկ ձեռագիր եւ միջնադարում բաժանուեց ենթաճիւղերի: Վանի զինագործների բարձր որակաւորման մասին պահպանուել է հետեւեալ հետաքրքիր վկայութիւնը. «*քաղաքում 80-ական թթ. ուստա Փանոսի ջանքերով եւ հնարամտութեամբ հնարաւոր եղաւ Բերդան հրացան արտադրել եւ վարպետը «իր գաղտնի արհեստանոցին մէջ կը նորոգէր փամփշտաւոր հրացաններ եւ կը շինէր Պերտան եւ Սուրմալի հրացաններ...*»[27]:

---

[25] Բազէեան, «Արհեստներն ու տնայնագործութիւնը», էջ 394:

[26] Ե. Լալայեան, «Վասպուրական. Ազգագրութիւն. Ա. Վան, Տոսպ եւ Հայոց Ձոր. մարդաբանական համառօտ տեղեկութիւններ», *Ազգագրական հանդէս, գիրք XX,* Թիֆլիս, 1910, էջ 131:

[27] Բազէեան, «Արհեստներն ու տնայնագործութիւնը», էջ 395:

Վանում հնագոյն ժամանակներից զարգացած ու տարածուած արհեստներից էր պղնձագործութիւնը: Պղնձեայ իրերից քաղաքային կենցաղի ամենալայն կիրառութիւն ունեցողն էին տարբեր տեսակի ու մեծութեան կաթսաները, ջրամանները, թասերը, ափսէները եւն.: Պղնձագործները պատրաստում էին նաեւ կանացի զարդեր ու եկեղեցական սպասք՝ բուրվառ, սկիհ, մոմակալ, ջահեր եւն.: Պղնձագործները թուով 20 էին, նրանք մրցակից էին Էրզրումի առաջադէմ պղնձագործներին եւ տարեկան սպառում էին 3000 լիտր պղինձ[28]:

Պղնձագործութեան հետ կապուած արհեստ էր անագագործութիւնը կամ անագապատումը, որը բնակչութեան մէջ յայտնի էր կլայեկչութիւն անունով: Քանի որ մաքուր պղինձը օքսիդանալու յատկութիւն ունէր, ուստի դա կանխելու համար պատում էին անագի բարակ շերտով: Անագագործները հիմնականում շրջիկ արհեստաւորներ էին եւ, անցնելով թաղից թաղ ու գիւղից գիւղ, անագապատում էին պղնձեայ իրերը:

ԱՂԻՒՍԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ ԵՒ ՔԱՐՏԱՇՈՒԹԻՒՆ

Վանում զարգացած արհեստներից էր աղիւսագործութիւնը, քանի որ տների պատերը կառուցւում էին հում աղիւսից, իսկ հիմնապատերը, խոնաւութիւնից մեկուսացնելու համար՝ քարից: Աղիւսի պատրաստման մանրամասն նկարագրութիւնը տուել է Լալայեանը. «*աղիւսը շինում են հողակոյտի վրայ ջուր ածելով կոխկրտում են, դարձնում կաւ, յետոյ ձեռքով վերցնում լցնում են գետնին դրուած փայտէ կաղապարի մէջ, երեսը հարթում եւ կաղապարը հանում: 10-15 օրուայ ընթացքում արեւի ազդեցութեամբ աղիւսը բոլորովին չորանում է եւ այնպէս ամրապինդ դառնում, որ նրանով շինուած տները երկու հարիւր տարուց աւելի են դիմանում: Միեւնոյն կաղապարով միաժամանակ կտրում են մէկ եւ կէս աղիւս, մինը քառակուսի 30 սանտ. մեծութեան, իսկ միւսը սրա կիսի չափ: Քառակուսի երկական աղիւսով շարում են տների ներքին յարկերը, իսկ մէկ ու կիսկանով՝ երկրորդ յարկերը*»[29]:

Վանում զարգացած էր նաեւ քարտաշութիւնը. ուսուցիչ Խաչատուր Գրուզեանը քանդակներով, դրուագներով, ծաղկազարդերով, դիմագծութեամբ եւ գրուածներով տապանաքարեր էր պատրաստում, նրան է պատկանում Աղթամարի Խաչատուր կաթողիկոսի տապանաքարը՝ նրա պատկերով եւ 12 առաքեալների արձանիկներով[30]: Քաղաքում գրեթէ բոլոր գերեզմանների վրայ կային տապանաքարեր: Տապանաքարերի մեծ մասը, յատկապէս հները, խաչքարեր էին՝ ննջեցեալի ոտքերի մօտ, արեւելեան

[28] ՀԱԱ, ֆ. 476, ց. 1, գ. 985, թ. 87:
[29] Լալայեան, էջ 122:
[30] Պօղոսեան, էջ 46:

կողմը կանգնեցրած, իսկ ննջեցեալի վրայ քառանկիւնի քար էր դրուած: Կային նաեւ դագաղաձեւ տապանաքարեր:

ԿԱՀԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

Կահագործութիւնը (մարանկոզ) նոր արհեստ էր եւ բաւական զարգացած, թէեւ վանեցի կահագործի մտքի ստեղծագործութեան եւ ճաշակին գոհացում տուող գործիքներն ու մեքենաները պակասում էին Վանում, որով նա չէր կարող վիեննացի կամ թիֆլիսեցի վարպետի նման իր երեւակայած ձեւը նրբութեամբ եւ ճշտութեամբ իրականացնել, բայց եւ այնպէս իր ձեռքում գտնուած պարզ գործիքներով էլ նա պատրաստել է ճաշակով եւ գեղեցիկ սեղաններ, աթոռներ, թիկնաթոռներ, պահարաններ, արկղներ, մեծ ու փոքր տուփեր, եւն. «*մասնաւորապէս ընկոյզի փայտերէ եւ ցիցերէ (քիւթիւկ) քաշուած տախտակներով շինուած եւ այլ եւ այլ առարկաներ, որ կրնան մրցիլ բուն եւրոպականներուն հետ՝ իրենց փայլաներկի (ճիլա) փողփողուններով ու զարդագիծերով*»[31]: Կահագործութեան զարգացման մասին է վկայում քաղաքի տների կահաւորանքը. «*սենեակի տախտակով պատած յատակը ծածկւում է գորգերով. գլխաւոր պատի մէջտեղում դրւում է մի փայտէ, վոլտերեան բազկաթոռ, երկու կողքին կիսաբոլոր փայտէ թախթեր, սադր, որոնք ծածկուած են յատուկ պատրաստուած ներքնակներով, եւ պատած գունաւոր կամ սպիտակ կտորով, որ ծոպերով եզրափակուած իջնում է մինչեւ յատակը, եւ ամբողջովին ծածկում փայտէ թախթը: Այս ներքնակների վրայ, պատերին կից, շարւում են երկար թիկնաբարձեր: Թախթերի կիսաբոլոր շրջանակի մէջ, բազկաթոռի առջեւ դրւում էր մի կլոր սեղան: Միւս պատերին կից ձգւում են փայտէ երկար բազմոցներ՝ կանապէ. մի քանի աթոռներ, փոքրիկ, կլոր սեղաններ դրւում են այս ու այն անկիւններում*»[32]:

ԴԵՐՁԱԿՈՒԹԻՒՆ ԵՒ ԳՈՐԾՈՒԱԾՔԵՂԷՆ

ԺԹ. դարի կէսերին Վանում խիստ սակաւ թուով դերձակներ կային: Զգեստը ձեւում եւ կարում էին կանայք՝ կիրառելով ձեռքի կարաձեւերը՝ շուլալկարը եւ թակալակարը: 1880ականներին, երբ Զինգերի կարի մեքենան մուտք գործեց Վան, դերձակների թիւը մեծացաւ: Աւանդական կարգով դերձակութեամբ զբաղւում էին միայն տղամարդիկ՝ կարելով թէ՛ տղամարդկանց, թէ՛ կանացի զգեստներ[33]:

Դերձակները այստեղ, ինչպէս եւ հայկական ու հայաբնակ այլ խոշոր քաղաքներում, տարբերւում էին ըստ կարուող հագուստի ոճի՝ եւրոպական, ասիական (թարզի) եւ զինուորական: Դերձակները մասնագիտացած էին նաեւ

---

[31] Նոյն, էջ 47:

[32] Լալայեան, էջ 127:

[33] Ն. Աւագեան, *Հայկական ժողովրդական տարազը (XIX-XX դդ. սկիզբ)*, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1983, էջ 27:

տղամարդու եւ կնոջ հագուստի պատրաստման մէջ. «*Առաջնոյն մէջ մասնաւորապէս աչքի կը զարնեն Յակոբ աղա Քիշմիշեան, արական (մերտանէ) տարազին, իսկ Պ. Եղիազար Պօղոսեան իգականի (զենտնէ) մէջ ըստ եւրոպական վերջին նորաձեւութեան: Ուստի զինուորական եւ ուրիշ պաշտօնական մարմիններ, ինչպէս նաեւ հարուստ դասակարգը շատ կը գնահատեն յիշեալ երկու վարպետներուն գործերը*»[34]:

Վանի արհեստաւորները հմուտ էին նաեւ տարբեր տեսակի գործուածքեղէն արտադրելու բնագաւառում: Գործուածքի հետ կապուած զբաղմունքները Վանում ներկայացուած են ե՛ւ տնայնագործութեան, ե՛ւ արհեստի ձեւով: Օրինակ՝ բրդի կամ բամբակի մշակումը, որը տան պայմաններում գզում էին կանայք, իսկ տանից դուրս՝ տղամարդիկ, որոնք յայտնի էին հալաճ անունով: Նոյնը կարելի է ասել նաեւ մանելու վերաբերեալ. թելը տնայնագործական եղանակով ստանում էին կանայք՝ գերազանցապէս իլիկի ու ճախարակի միջոցով բուրդն ու բամբակը մանելով, իսկ յատուկ արհեստանոցներում դրանով զբաղւում էին տղամարդ վարպետները: Այդ վարպետներից Միքայէլ Առեղցեանը մտածել էր ստեղծել մանելու եւ գործելու աշխատանքները թեթեւացնող մեքենայ: Նա կարողացել էր ստեղծել մի մեքենայ 20 իլիկներով: Վարպետը շուտով բացել է մի փոքրիկ գործարան, որտեղ աշխատել է 3-4 մեքենայ[35]: Վան քաղաքը միջազգային կապեր է ունեցել ասիական եւ եւրոպական մի շարք երկրների հետ: Առեւտրական կապերի շնորհիւ օտար երկրներից ներմուծուել են բազմատեսակ թելեր, կերպասեղէն[36]: Տեղում նոյնպէս արտադրուել են տարբեր տեսակի կտորներ ու թելեր. «*ոսկեայ, արծաթեայ, մետաքսեայ թելերի, ուլունքների, գոհարների հետ բանեցուել են բոժոժի շապիկը, սագի փետուրը եւ այլն*»[37]:

Հայկական գործուածքի մէջ կարեւոր տեղ էր զբաղեցնում Վանի ասեղնագործութիւնը: Վանի ասեղնագործութեան հիմնական առանձնայատկութիւններն են տեղական ասեղնակարի (Վանի կար) առկայութիւնը, գերակշռող երկրաչափական զարդանախշերը. այն աչքի է ընկնում կիրառման լայն շրջանակով՝ սկսած կանանց ու տղամարդկանց աւանդական հագուստի գեղազարդումից մինչեւ կենցաղային ամենատարբեր իրերն ու առարկաները, որոնք կարեւոր տեղ էին գրաւում բնակարաններում: Վանի ասեղնագործութիւնը հարուստ է ասեղնակարերով՝ սկսած ամենապարզից, որը նաեւ ամենահինն է, մինչեւ ամենանորն ու բարդը: Սակայն, այն ունի նաեւ զուտ տեղական կարաձեւ, որը Սէրիկ Դաւթեանն անուանել է «Վանի

---

[34] Բազէեան, «Արհեստներն ու տնայնագործութիւնը», էջ 406:

[35] Պօղոսեան, էջ 46:

[36] Ս. Դաւթեան, *Հայկական ասեղնագործութիւն*, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1972, էջ 14:

[37] Նոյն:

կար»[38]: Դա համրովի կար է, որն արւում է գործուածքի թելերի հաշուով, ուստի ասեղնագործութեան համար գործածւում էին թեթեւ, նուրբ, ցանցկէն սպիտակ բամբակեայ կտորներ: Գործող թելը, որը գերազանցապէս մետաքսեայ էր, հորիզոնական ծածկում էր կտորի երեք թելը, յետոյ թեք բարձրանում երեք թելի վրայով, դարձեալ վերցնում երեք թել ու այդպէս շարունակ: Ընդորում, գործող թելը սեղմում էր կտաւի թելերն ու առաջացնում ծակոտիներ: Ստացւում էր ցանցկէն նախշ, որը ցանկութեան դէպքում այնուհետեւ եզրազարդւում էր կամ աւելի մուգ գոյնի մետաքսաթելով, կամ ոսկեթելով:

Վանի ասեղնագործական դպրոցում տարածուած ամենանախնական պարզ կարածեւերը կարելի է տեսնել աւանդական հագուստի ասեղնագործութեան մէջ: Վանի հագուստի առանձնայատկութիւնը դրսեւորւում է առաջին հերթին տղամարդու տարազի մեջ ասեղնագործութեան կիրառմամբ: Տղամարդու տարազում ասեղնագործութեամբ նախշում էին տեղական կտաւից կարուած շապիկի օձիքը, կուրծքը, թեւքաբերանները՝ լայն շերտերով: Շալուարը կարւում էր տեղական շալ կտորից ու փողքերի երկու կողմը նախշւում բրդեայ թելերով. «*շալուարի փողկերի աջ ու ձախ կողմերը, նաեւ ներքին ծայրերը պատած են 12-17 սանտիմետր լայնութեան գունաւոր ձեռագործով: Շալուարի խոնջանը գունաւոր թելերից է գործած, 2 սանտիմետր լայնութեան եւ ծայրերին ունի միքանի փնջիկներ, կապոյտ ուլունքներով զարդարուած*»[39]:

Ասեղնագործութեամբ աւելի հարուստ էր կանանց հագուստը: Կնոջ զգեստահամալիրը աչքի էր ընկնում զարդանախշերի բազմազանութեամբ: Վերնազգեստը կարւում էր տեղական մանուսա կտորից ու չէր զարդարւում, բայց դրա փոխարէն գեղեցիկ ասեղնագործւում էին հագուստի միւս մասերը՝ գդակ-արախչին, կրծկալ-սրտանոցը, որի հետ գործածում էին գօտիկից կապուած գոգնոց-մեզարը, գլխի լաչակ-չամբարը, փուշին (մետաքսեայ փայլուն գլխաշոր)[40]: Վերջիններս կարւում էին բամբակեայ գործուածքից՝ կտաւից, ասեղնագործւում բրդեայ, բամբակեայ գունաւոր թելերով եւ խաչակարով ու համրովի հարթակարով: Զարդանախշերը արւում էին իրար շատ մօտ եւ խիտ շարքերով այնպէս, որ գործուածքը յաճախ տակից չէր երեւում: Աղջիկները գործածում էին «արախչին» գլխարկը, որը կարւում էր սպիտակ բամբակեայ կտորից, ապա ասեղնագործւում սպիտակ թելերով՝ ի տարբերութիւն տղամարդկանց գդակների, որոնք գունազարդ էին:

---

[38] Կ. Բազէեան, «Վասպուրականի ասեղնագործութեան առանձնայատկութիւնները», *Հայաստանի մայրաքաղաքները, գիրք I, Վան*, խմբ.՝ Յ. Մարութեան, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» հրատ., Երեւան, 2013, էջ 281:

[39] Լալայեան, էջ 133:

[40] Բազէեան, «Վասպուրականի ասեղնագործութեան», էջ 283:

Տղամարդկանց ու կանաց տարազի ասեղնագործութիւնների զարդանկարները երկրաչափական, բուսական, կենդանական պատկերագրութեան հնագոյն տեսակներն են, որոնց մէջ գերակշռողը երկրաչափականն է:

Վանի ասեղնագործական դպրոցը հարուստ է նաեւ կենցաղային իրերի տեսակներով ու բազմազանութեամբ: Ի տարբերութիւն աւանդական տարազի բանուածքի, որն արտում էր յատուկ ոլորքի բրդեայ կամ հաստ բամբակեայ թելերով, կենցաղային ասեղնագործութեան մէջ գործածւում էին շատ նուրբ բազմագոյն մետաքսաթելեր: Բացի համընդհանուր կիրառում ունեցող վարագոյրներից, սրբիչներից, բարձի երեսներից, տարբեր չափերի ու ձեւերի ասեղնագործ ու ժանեակէ ծածկոցներից՝ այստեղ լայն տարածուած էին ասեղնագործ գորգերն ու յարդարանքային նշանակութիւն ունեցող դիմանկարային աշխատանքները:

Վանի ձեռագործների մէջ հետաքրքրութիւն է ներկայացնում վեցուկէս մետր երկարութիւն ունեցող սրբիչը, որի մի մասը փռուել է հացկերոյթին մասնակցողների ծնկներին, իսկ միւս մասը՝ սփռոցի վրայ՝ սեղանի եզրով: Սրբիչի վրայ թեք-թեք ասեղնագործուած են ոճաւորուած ծաղկազարդ երկարաւուն ճիւղեր: Ինքնուրոյն զարդանկարներով եւ մետաքսեայ կարմիր թելերով կարուած «Վանի» ասեղնակարերով աչքի են ընկնում քառակուսի անձեռոցիկները, որոնք պայմանական «լաբիրինթ» անունն են ստացել, շնորհիւ կենտրոնական լաբիրինթանման գծերի[41]: Բանուածքի կենտրոնական քառակուսին, առնուած ութանկիւն շրջանակի մէջ, իր հերթին նորից եզերուած է թելքաշ քառակուսի շրջանակով: Անձեռոցիկի եզրերով անցնում է նոյն թելքաշը: Երկու թելքաշերի միջեւ եղած տարածութեան վրայ տեղադրուած են ոճաւորուած ծաղկեփնջեր, կենաց ծառեր, թռչնազարդեր, երկրաչափական խաչաձեւեր: Ճարտարապետական զարդանկարները նման են կամարակապ մուտքի, խորանների, որոնք միացած են կենտրոնական մասին՝ նրա երկու կամ չորս կողմերից:

Հետաքրքիր են նաեւ Վանի ասեղնագործ ծածկոցները, որոնցից մէկի վրայ պատկերուած է ձեռքերը վեր բարձրացրած մի կին: Գլխի յարդարանքը նման է հայկականի, վրայից դրուած է ատամնաւոր թագ: Բացի երեսի երկու կողմից իջնող մազերի փնջից, որը խոպոպներով է վերջանում, թագի երկու կողմից իջնում են հիւսերը կամ զարդ-ժապաւէնները, որոնք վերջանում են փնջաւոր քառակուսիներով: Ճակատնոցը եւ խոպոպները բանուած են բաց կարմիր մետաքսաթելերով, իսկ թագն ու հիւսերը՝ կանաչ: Վարդագոյն հագուստի կուրծք-սրտանոցը ասեղնագործուած է կանաչ թելով: Փէշը ձեւաւորուած է քառակուսիներով, որի տակից երեւում են ոտքերը: Կնոջ ձեռքերը վեր են բարձրացուած, ճկոյթ մատից կախուած է կանաչ գոյնի թաշկինակ, որը հասնում է մինչեւ փէշը[42]: Ասեղնագործութեան զարդանկարների դասաւո-

---

[41] Դաւթեան, *Հայկական ասեղնագործութիւն*, էջ 17:

[42] Նոյն:

րութիւնն ու կառուցուածքը, կանանց պատկերի առկայութիւնը ցոյց են տալիս դրանց հնագոյն ծագումը եւ կապը հայոց վաղ շրջանի պաշտամունքների եւ առասպելաբանութեան հետ:

ԺԹ. դարավերջին եւ Ի. դարասկզբին լայն տարածում են ստացել հայրենասիրական, պատմական տեսարանների եւ հասարակական գործիչների պատկերներով եւ այլ բովանդակութեամբ նկար-ասեղնագործութիւնները:

Այսպիսով՝ Վանի ասեղնագործութիւնը աչքի է ընկնում իրեն բնորոշ առանձնայատկութիւններով՝ կատարման եղանակներով եւ հնարքներով, զարդանախշերով եւ գունային լուծումներով: Վանի կարը Վասպուրականի բնակչութեան արտագաղթի հետ յետագայում տարածուել է Փոքր Հայք, Կապադովկիա, Կիլիկիա, Ղրիմ, Կոստանդնուպոլիս եւ այլուր, այսինքն՝ այն տարածքներ ու բնակավայրեր, որտեղ հաստատուել է վանեցին յետագայում[43]:

Կարեւոր տեղ ունէին նաեւ ասեղնագործ ժանեակները: Վանում ժանեակը կրել է ճութ անունը, իսկ արհեստանոցը՝ ճթարան[44]: Վանի ժանեակները հիմնականում կարուել են կոճի սպիտակ բարակ թելերով: Ժանեակը կարուել է երկար շերտերով՝ սպիտակեղէնը, օձիքի եզրերը զարդարելու համար: Առանձին կլոր, քառակուսի, եռանկիւնաձեւ, ձուաձեւ եւ այլ խառը ձեւերով պատրաստել են ծածկոցներ եւ անձեռոցիկներ:

Ժանեակի զարդանկարներում պահպանուել է արեւի նշանը՝ կազմուած չորս, հինգ, վեց, եօթ եւ աւելի «նորերից» (մահիկաձեւերից), ութ ռոմբաձեւ պսակաթերթերով ծաղիկը, որը նման է նաեւ աստղի (աստղ-ծաղիկ), կլոր վարդեակները, զանազան ռոմբաձեւերը, եռանկիւնիները, զիգ-զագ գծերը (Վանում կոչւում էին ճակա-ճիկօ), ատամների, սիւների, կամրջակների շարքերը, խաղողի ոճաւորուած ողկոյզ-ճութը, թռչունները՝ մանաւանդ զոյգ թռչուն-ծաղկի երկու կողմից, եւ շատ ու շատ այլ երկրաչափական ձեւեր[45]:

Հայկական, առաջին հերթին Վանի, ժանեակի առանձնայատկութիւնը զարդանկարների դասաւորման կարգի մէջ բարդ համախմբուած զարդարանքներն են: Մեծ ծածկոց-սփռոցների մէջ լաւ մշակուած է զարդանկարների ընդհանուր կառուցուածքը. առանձին մոտիւները յատուկ կշռոյթով դասաւորւում են համակենտրոն անցնող շերտերի վրայ: Շերտերը արւում են ցանցկէն, օդային ձեւաւորուած ծակոտիներով, որոնց կողքին տեղադրւում են աւելի խիտ ծակոտիներով զարդարուած զարդանկարները: Տարբեր տեսակի շրջանակաձեւերը միմեանց հարեւանութեամբ կազմում են մտածուած, մշակուած ներդաշնակութիւն, ուր դաշտն ու վրայի զարդաձեւերը միաւոր-

---

[43] Բազէեան, «Վասպուրականի ասեղնագործութեան», էջ 281:

[44] Ճութ-ճութերով՝ նշանակում է ողկուզաձեւ, փնջաձեւ. փունջ-փունջ, ճութ-ճութ: Վանի ժանեակի զարդանկարների մէջ խաղողի ոճաւորուած ողկոյզ-ճութը աչքի ընկնող դեր է գրաւում (Ս. Դաւթեան, *Հայկական ժանեակ*, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., Երեւան, 1966, էջ 18):

[45] Նոյն:

ուած են միմեանց հետ եւ իրար լրացնելով կազմում են մի համաձոյլ միասնութիւն: Շերտերի արանքի պատերը, սիւները կամ կամրջակները, սահմանագծերով նախշազարդ շերտերը միեւնոյն ժամանակ աւելի տեսանելի են դարձնում շերտի վրայի կրկնուող զարդանկարները: Ամէն մի կլոր շրջանակի վրայ նախշը տեղադրւում է ամբողջութեամբ, մէկը-միւսի ետեւից, այնպէս որ չի երեւում ոչ սկիզբը, ոչ վերջը, թւում է թէ նախշերը կողք-կողքի վազում են միմեանց ետեւից: Ժանեակի զարդանկարների նմանօրինակ դասաւորութիւնը չափազանց ինքնուրոյն է, չի հանդիպում ուրիշ ժողովուրդների մօտ եւ յատկանաշական է առաջին հերթին Վանի դպրոցի համար: Հին զարդամոտիւների պահպանումը, ներդաշնակութեան առկայութիւնը, ժանեակի անթերի կատարումը ապահովում է Վանի ժանեակի գեղարուստական տեսքը:

Վանի ժանեկագործները յայտնի էին իրենց վարպետութեամբ եւ յաճախ հրաւիրւում էին Ռուսաստանի, Օսմանեան կայսրութեան եւ Պարսկաստանի հայկական դպրոցներ որպէս ձեռագործի ուսուցիչներ: Շատ-շատ էին նման վարպետ ժանեկագործները, նրանցից յայտնի էր Սողոմէ Ջրբաշեանը, ով աշխատել է Վանում եւ Երեւանում: Նրա եւ նրա աշակերտուհիների պատրաստած ժանեակները միշտ եւ ամէն տեղ արժանացել են բարձր գնահատման[46]:

Քաղաքում զարգացած էին նաեւ դաջագործութիւնը (հիմնականում կարմիրով) եւ ծաղկազարդումը. առաջինը կատարւում էր յատուկ փայտէ փորագրուած դաջերով, որոնք մտցւում էին տարբեր գոյների ներկերի մէջ ու տպում կտորի վրայ, իսկ միւսը կատարում էին վրձիններով՝ նուրբ ու մանր ծաղկանախշեր նկարելով գործուածքի վրայ: Մինչեւ ԺԹ. դարի վերջերը միջին տարիքի կանայք գործածել են դաջած «մոմուկ» գոգնոցներ, լաչակներ: Ներկարարները այդ հագուստների կտորների զարդարուող մասերը ծածկել են մոմով, ապա կարասի մէջ գցելով, ներկել են կապոյտ, յետոյ տաք ջրով եւ աւելով սրբել-լուացել են մոմը՝ ստանալով սպիտակ նախշեր[47]:

Գործուածքի հետ կապուած միւս արհեստը, որ տարածուած էր Վանում, վրանագործութիւնն էր (չադրջի): Ըստ Ատրպետի ձեռագիր նիւթերի «*Վանի ծովի եզերքում նաւավարների համար վրանագործները պատրաստում էին առագաստներ սպիտակ կտաւից՝ կրկնակի կտաւով: Բացի այդ, նրանք վրաններ էին պատրաստում ինչպէս մասնաւոր անձանց՝ չոբանների, քրդերի, բէկերի, ցեղապետերի, այնպէս էլ՝ պետական, այսինքն զինուորականների համար*»[48]:

Վանի ամենահին արհեստներից էր կտաւագործութիւնը: Վանեցիները, նրանց դրացիները գործածում էին Վանի ջուլհակների գործած եւ ներկա-

---

[46] Դաւթեան, *Հայկական ժանեակ*, էջ 19:

[47] Դաւթեան, *Հայկական ասեղնագործութիւն*, էջ 18:

[48] Բազէեան, *Արհեստներն ու տնայնագործութիւնը*, էջ 404-5:

ռարների կամ չիթչիների պատրաստած կտաւը, շիլան եւ չիթը: Վանի կտաւագործները կտաւը գործելուց յետոյ ներկում էին տորօնով, որը մի բոյսի արմատ էր, որ բոլոր այգիներում մեծ առատութեամբ էր գտնւում[49]: Այդ գոյնը չփոխող կարմիր կտաւը շիլա էր կոչւում: Ի. դարասկզբին գրեթէ քաղաքում վերացել էր դրանց գործածութիւնը: Քաղաքացիների փոխարէն գիւղացիները մեծ քանակութեամբ գործածում էին Վանի չիթը, կտաւն ու շիլան: Կտաւագործութեան անկման միակ պատճառը եւրոպական ապրանքների մուտքը չէր, այլ բամբակի թանկութիւնը կամ սակաւութիւնը: Մինչեւ 1897-98՝ Վանը բամբակ էր ստանում Պարսկաստանից, բայց երբ Պարսկաստանն իր բամբակի ճանապարհը Վանից դէպի Երեւան փոխում է, Վանի կտաւագործութիւնը կանգ է առնում: Կտաւագործները սկսում են գործածել Բիթլիսի բամբակ եւ եւրոպական մանած «ֆելեմենկ»: Չնայած այս աննպաստ պայմաններին, այնուամենայնիւ, կտաւագործութիւնն իր կարեւոր տեղն ունէր Վանում: Կար 100ի չափ կտաւի գործարան՝ 300 դազգահով, մէկ տարում այս գործարանները տալիս էին 100,000 թոփ կտաւ[50]:

Կտաւագործութեան մի ճիւղ էլ համարւում էր շալագործութիւնը. կտաւը բամբակի մանածից էին պատրաստում, իսկ շալը՝ այծի մազից: «*Շալի համար գործ են ածում անգորեան այծի բուրդը, որն ունի ընտիր յատկութիւն եւ գնահատւում է շատ թանկ: Անգորեան այծերը այստեղ յայտնի են կեժ անունով, այդ անունով կոչւում է նաեւ նրա բուրդը*»[51]: Ամբողջ շալագործների թիւը հասնում էր 25ի:

ԿՕՇԿԱԿԱՐՈՒԹԻՒՆ

Կօշկակարութիւնը հին արհեստ էր Վանում, քանի դեռ չէր սկսուել "կոնդուռա"յի կամ "բոտին"ի գործածութիւնը: Կօշկակար ասելով թուրքահայերը հասկանում էին չուստ, սոլ կարող, այդ պատճառով էլ բոտին կօշիկ կարողներին ասում էին մուճակագործ: Սոլակարութիւնը բանուկ արհեստ էր համարւում, բայց մուճակագործութիւնը բաւական հարուած է հասցնում այս արհեստին: Վանեցի մեծահասակների մի փոքր մասը կօշիկ էր հագնում, այն էլ ամառուայ ընթացքում գլխաւորապէս շոգի պատճառով, իսկ 3-15 տարեկան մանուկները ընդհանրապէս սոլ էին հագնում: Սոլակարները տեղական պահանջի համեմատ պատրաստում էին ոչ այնքան նուրբ, որքան ամուր ու դիմացկուն սոլ. «*սոլը նման է եւրոպական փուֆլուն, երեսը այծի, ոչխարի կաշուց է լինում, իսկ ներքանը գոմշու կաշուց: Սրա մի տեսակը, որի յետեւի, կրնկի, մասը նեղ շերտով մօտ 5 սանտիմետրաչափ բարձ-*

[49] Պօղոսեան, էջ 34:
[50] Ծերուկ, «Վանի նահանգը ներկայումս», *Մուրճ*, 8:1904, էջ 32:
[51] ՀԱԱ, ֆ. 476, ց. 1, գ. 135, թ. 29:

րանում է, կոչւում է պոչով սոլ: Հագնելիս այս պոչից բռնում, քաշում են»[52]: Սոլակարների թիւը հասնում էր 80ի:

Մուճակագործութեան արհեստը զգալի առաջադիմութիւն էր ապրել: Վանում գործածում էին տարբեր տեսակի մուճակներ (ինչպէս իրենք էին ասում՝ բոթիներ)[53]: Վանի մուճակագործները կարող էին պատրաստել ամենանուրբ եւ ճաշակով մուճակներ, յատկապէս կրկնակօշիկներ, բայց դրա կարիքը չկար, որովհետեւ մուճակի գործածութեան նորավարժ վանեցին պահանջում էր, որ իր գործածած կօշիկները նրբութիւնից աւելի դիմացկունութիւն ունենան: Այդ պատճառով էլ մուճակների տակ դնում էին կիսագնդաձեւ մէխեր եւ երկաթի տափակ շերտեր, որպէսզի շուտ չվնասուի, թէեւ օրէցօր նուրբ կօշիկներ փնտռողների թիւն էլ շատանում էր: Մուճակագործների թիւը Վանում հասնում էր 60ի: Այս արհեստին վանեցիները թուրքերէն անուանում էին կոնդուռաջութիւն:

ԺԱՄԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

Ժամացոյց գործածելու սովորութիւնն ընդհանրացել էր Վանում: Տղամարդիկ այն օգտագործում էին իբրեւ անհրաժեշտութիւն, իսկ կանայք իբրեւ զարդ կամ մոդա: Նորահարսների նշանների մէջ կարեւոր տեղ էր զբաղեցնում ժամացոյցը: Լալայեանը գրում է. «*Նշանօրհնէքից յետոյ երբեմն քաղաքացւոց մէջ նշանդրեսի հրաւէր էլ է կատարւում: Փեսացուի հայրը իւր երկու սեռի ազգականների ու բարեկամների հետ գնում է հարսնացուի տունը, տանելով իւր հետ հարսնացուի համար ընծաներ՝ ժամացոյց, ապարանջան, մանեակ եւ այլն*»[54]: Ժամացոյցի գործածութիւնը առաջ է բերել Վանում նաեւ ժամագործութեան արհեստը:

ԱՄՓՈՓՈՒՄ

Այսպիսով, կարող ենք ասել, որ Վանում արհեստները բաւականին զարգացած էին: Առանձնապէս կատարելութեան էին հասել երկաթագործութիւնը, կահագործութիւնը, դերձակութիւնը, կօշկակարութիւնը, իսկ ոսկերիչների ու արծաթագործների պատրաստած իրերը իսկական արուեստի գործեր էին, որոնք մեծ համբաւ ունէին ոչ միայն երկրի ներսում, այլեւ նրա սահմաններից դուրս:

1915ին Վանի հայութիւնը տեղահանուեց իր բնօրրանից, սակայն իրեն բնորոշ արհեստների զարգացման ընթացքը կանգ չառաւ: Վանեցի վարպետները շարունակեցին աշխատել ու ստեղծագործել: Որտեղ էլ նրանք հաստատուեցին, ստեղծեցին նոյնօրինակ արժէքաւոր իրեր ու առարկաներ, որոնցով ճանաչուեցին ու գնահատուեցին նաեւ նոր բնակավայրերում:

---

[52] Լալայեան, էջ 134:
[53] Ծերուկ, էջ 30:
[54] Լալայեան, էջ 147-48:

Ճակատազարդ, Վան, ԺԹ. դ.կէս, արծաթ, փիրուզ, ապակի, 119, 93 գր., © ՀՊԹ Ա 6740

Մանեակ, Վան, Ի. դ., արծաթ, ոսկեջուր, ապակի, 36,5 գր., © ՀՊԹ Ա 6975 եւ՝ ապարանջան, Վան, ԺԹ. դ., արծաթ, ոսկեջուր, 62, 7 գր., © ՀՊԹ Ա 6395

Ապարանջան, Վան, ԺԹ. դ., արծաթ, սեւադ, փորագրութիւն, 47, 09 գր., © ՀՊԹ Ա 6406 ա, բ

Ականջօղ, Վան, ԺԹ. դ., արծաթ, ապակի, մարգարիտ, 6, 70 գր., © ՀՊԹ Ա 6599 եւ՝ քունքազարդ՝ երեսնոց, Վան, Ի. դ., արծաթ, ապակի, 32, 11 գր., © ՀՊԹ Ա 5051

Մատանի, Վան, ԺԹ. դ., արծաթ, մարջան, 3, 33 գր., © ՀՊԹ Ա 6564 եւ՝ մատանի, Վան, ԺԹ. դ., ոսկի, փիրուզ, մարգարիտ, նռնաքար, 11, 37 գր., © ՀՊԹ Ա 8205



Կրծքազարդ «Շամշիկ», Վասպուրական, ԺԹ. դ.վերջ, արծաթ, 159, 60 գր., © ՀՊԹ Ա 6733 ա, բ եւ՝ Գօտի, Վան, ԺԹ. դ., արծաթ, 357, 20 գր., © ՀՊԹ Ա 8345

Սեւադապատուած արծաթեայ ծխախոտի տուփ, Վան, 9,5x5x2 սմ, 108 գր., Թօքաթ, *Հայ արծաթագործ վարպետներ* եւ՝ Նշանադրութեան մատանու քսակ, Վան, Ի. դ., արծաթ, 4,8x6,6 սմ, 70,15 գր., © ՀՊԹ Ա 6251

Սեւադապատուած արծաթեայ ջրի ըմպանակ, Վան, 338 գր., Թօքաթ, *Հայ արծաթագործ վարպետներ* եւ՝ Սեւադապատուած արծաթեայ գինու բաժակներ, Վան, 583 գր., Թօքաթ, *Հայ արծաթագործ վարպետներ*

Անձեռոցիկ «Լաբիրինթ», Վան, ԺԹ. դ.վերջ, բամբակ, մետաքսաթել, 41x37 սմ, © ՀՊԹ Ա 253



Գլխաշոր, Վասպուրական, ԺԹ դ., բամբակ, մետաքս, ոսկեթել, ապակէ ուլունք, © ՀՊԹ Ա 702



Վանի դպրոցի ժանեակների նմուշներ, Գալֆայեան, Վանի դպրոցի ասեղնագործ ժանեակները

THE CRAFTS OF THE CITY OF VAN
(19th CENTURY – EARLY-20th CENTURY)
(SUMMARY)

NAZANI GASPARYAN
gasparyannazani@gmail.com

Based on a set of data and information on the development of crafts in the city of Van and its various directions, the study depicts a panoramic picture of the crafts in the city and concludes that craft work had a competitive edge and was in high demand not only in the city and its environs but even in Constantinople. The study notes that the crafts constituted a rich, valuable part of the cultural heritage of the Armenians in Van.

Dozens of crafts were developed in Van and a number of workshops were opened during the second half of the 19th century. In particular, ironwork, furniture making, tailoring, and shoemaking were well-developed crafts. The products of jewelers and silversmiths were works of art and were very famous not only in the country but also abroad.

During World War I Van was ethnically cleansed of its indigenous Armenians. They were uprooted and deported to Iran, Eastern Armenia and Georgia. However, Van master craftsmen continued to work and create in their new homelands.